Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **12.07.2023թ. ժամը 11.00**

Նիստը նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 8 անդամներից 6-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետի խորհրդական Սասուն Սահակյանը, մարզպետի օգնականներ Մանանա Գալստյանը և Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը և «Գեղամա աշխարհ» մարզային թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանը:

Օրակարգում՝

1. 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /*Զեկ. Յուրա Մուշեղյան* - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից աղբահանություն իրականացնելու նպատակով պլանավորված սակագների, հավաքագրված գումարների և կնքված պայմանագրերի վերաբերյալ:
   /*Զեկ. Վանիկ Հարությունյան* - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ /

3. 2023 թվականի համահայկական 8-րդ խաղերի մասնակցության նախապատրաստական աշխատանքների և մարզի համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման գործընթացի մասին.
   /*Զեկ. Գեղամ Չարվադարյան* - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականի ընթացիկ գյուղատնտեսական աշխատանքների մասին:
   /Զեկ. *Մարտին Պետրոսյան* - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ/

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին:
   /Զեկ. *Գևորգ Խաչատրյան* - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող/

6. Այլ հարցեր:

Հայտարարությամբ հանդես եկան՝

Արտաշ Սարդարյանը - «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն
Հովհաննես Հովեյանը - Մարտունի համայնքի ղեկավար

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) աշխատանքներ տանել 2023 թվականի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները ըստ համամասնությունների տարվա կտրվածքով ապահովելու համար, դրական գնահատելով ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արձանագրած արդյունքները.

2) շարունակել մարզի համայնքներում աղբահանության պայմանագրերի կնքման և գումարների հավաքագրման գործընթացը՝ համագործակցելով մարզպետի աշխատակազմի հետ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված տեղեկատվությունը օգտագործել գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտերի հետ նոր պայմանագրերի կնքման գործընթացում.

3) 2024 թվականին աղբահանության աշխատանքները մեկ միասնական օպերատորի պատվիրակելու գործընթացին ընդառաջ մարզի համայնքներում վերլուծել աղբահանության ցուցանիշները, վեր հանել ռեզերվները՝ պայմանագրերի քանակի և գանձվող վճարների մասով, իրականացնել աղբահանության սակագների վերանայում.

4) շարունակել 2023 թվականի օգոստոսի 5-19-ն անցկացվող համահայկական 8-րդ խաղերի մասնակցության նախապատրաստական աշխատանքները և ապահովել համայնքներից հայտագրված մարզիկների մասնակցությունը.

.

5) ոռոգման սեզոնի ընթացքում աշխատանքները ժամանակին և կազմակերպված իրականացնելու համար համագործակցել «Գեղարքունիք» ՋՕԸ-ի հետ՝ ընկերության կողմից գույքագրված խնդիրները համատեղ լուծելու համար: Ֆինանսապես աջակցել «Գեղարքունիք» ՋՕ ընկերության ջրբաշխներին: Աջակցել համայնքներում խելացի և խնայողական ոռոգման համակարգերի վերաբերյալ բնակչության իրազեկման և ներդրման աշխատանքներին.

6) մեծացնել վերահսկողական աշխատանքների ծավալը սուբվենցիոն ծրագրերի իրականացման որակի և ժամկետների նկատմամբ.

7) ապօրինի գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքներն ավարտել և շարունակական վերահսկողություն իրականացնել նոր վահանակների տեղադրման ժամանակ օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

17.07.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ